# Medi-Cal-ն ունի ատամնաբուժական ապահովագրություն



Որպես Medi-Cal-ի անդամ, ձեր և ձեր երեխայի նպաստները ներառում են ատամնաբուժական ապահովագրություն: Ստորև ներկայացված է Medi-Cal-ի կողմից տրամադրվող ատամնաբուժական խնամքի վերաբերյալ աղյուսակը:

| ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՆՈՐԱԾԻՆՆԵՐ | ԵՐԵԽԱՆԵՐ | ԴԵՌԱՀԱՍՆԵՐ | ՀՂԻՈՒԹՅՈՒՆ | ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐ | ՏԱՐԵՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Քննություն* | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Ռենտգեն | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Ատամների մաքրում | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Ֆտորիդային լաք | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Պլոմբներ | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Ատամի հեռացում | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Շտապ օգնության ծառայություններ | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Հանգստացում | ✓ | ✓ | ✓ | | ✓ | ✓ |
| Սեղանատամի հերմետիկներ** | | ✓ | ✓ | | | |
| Արմատի խողովակներ | | ✓ | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Օրթոդոնտիա (բրեկետներ)*** | | | ✓ | | | |
| Ատամնապսակներ**** | | | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Ամբողջական և մասնակի պրոթեզներ | | | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Պրոթեզների ամրացում | | | ✓ | ✓ | ✓ | ✓ |
| Ատամնաքարերի հեռացում և արմատի պլանավորում | | | ✓ | ✓ | ✓ | ✓ |

*Անվճար կամ ոչ թանկ ստուգումներ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ՝ մինչև 21 տարեկան անդամագրվածների համար, 12 ամիսը մեկ՝ 21 տարեկանից բարձր անդամագրվածների համար:
**Մշտական սեղանատամային հերմետիկները ապահովագրված են մինչև 21 տարեկան երեխաների և դեռահասների համար:
***Նրանց համար, ովքեր համապատասխանում են չափանիշներին:
****Սեղանատամների կամ նախասեղանատամների (հետևի ատամների) պսակները որոշ դեպքերում կարող են ապահովագրվել:

## ՄԱՆՈՒԿՆԵՐ

Ատամնաբույժի մոտ ձեր երեխայի առաջին այցելությունը պետք է տեղի ունենա առաջին ատամի հայտնվելուց հետո, բայց ոչ ուշ, քան առաջին ծննդյան օրը: Մանկական ատամները կարևոր են ձեր երեխայի առողջության և զարգացման համար: Դրանք օգնում են նրան ծամել, խոսել և ժպտալ:

## ԵՐԵԽԱՆԵՐ

Երեխաները սկսում են կորցնել իրենց մանկական ատամները հինգ տարեկան հասակում: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ մշտական ատամները սկսում են աճել: Ատամնաբույժից խնդրեք սեղանատամի հերմետիկներ՝ ձեր երեխայի սեղանատամները խոռոչներից պաշտպանելու համար:

## ԴԵՌԱՀԱՍՆԵՐ

Շաքարային սննդամթերքի և խմիչքի օգտագործումը, ինչպես հաճախ անում են դեռահասները, նրանց կանգնեցնում է լնդերի հիվանդության և ատամների քայքայման ավելի մեծ վտանգի առաջ: Կանոնավոր ստուգումներ անցնող դեռահասները ապահովում են իրենց ատամների առողջությունը մինչև հասուն տարիք;

## ՀՂԻՈՒԹՅՈՒՆ

Բերանի խոռոչի լավ խնամքն օգնում է կանխել հղիության ընթացքում առաջացած խնդիրները: Որպես Medi-Cal ծրագրին անդամագրված՝ Դուք ապահովագրված եք հղիության ընթացքում և Ձեր երեխայի ծնվելուց հետո 12 ամսվա ընթացքում:

## ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐ

Տարիքի հետ Ձեր առողջության մասին հոգ տանելն ավելի կարևոր է դառնում: Ատամնաբույժին պարբերաբար այցելելը նպաստում է Ձեր լնդերի ու ատամների ամրությանը և բարելավում է Ձեր ընդհանուր առողջական վիճակը:

## ՏԱՐԵՑՆԵՐ

Տարեցները հակված են լնդերի հիվանդությունների և բերանի խոռոչի առողջության հետ կապված այլ խնդիրների: Դուք կարող եք նվազեցնել ռիսկը՝ օրական երկու անգամ խոզանակով մաքրելով Ձեր ատամները, ամեն օր ատամ մաքրելու թել օգտագործելով և Ձեր ատամնաբույժին պարբերաբար այցելելով:

Իմացեք ավելին ձեր ստոմատոլոգիական նպաստի մասին և գտեք Medi-Cal ատամնաբույժ ձեր մոտակա **SmileCalifornia.org**-ում կամ զանգահարեք **1-800-322-6384** հեռախոսահամարով: Medi-Cal Dental-ի մոտ ձեր այցելությունը անվճար է կամ ունի ցածր արժեք; Նշանակե՛ք ձեր հանդիպումն այսօր:

**SmileCalifornia.org | 1-800-322-6384**

smile, CALIFORNIA™
MEDI-CAL HAS DENTAL COVERED

rev 03-2022